

Էդիկ Մինասյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵԻՒ ՍՓՅՈՒՈՔՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ըստ նորահայտ փաստաթղթերի)

**Սփյուռք, Չանգեզուր, Սոֆիա, ԱՄՆ, Փարիզ, Բուլղարիա,
ցեղակրոն շարժում, ցեղասպանություն, ցեղային արթնություն**

Գարեգին Նժդեհը երեք տասնյակից ավելի ապրել է Սփյուռքում: 1921 թ. հուլիսին նա թողնում է Չանգեզուրը և անցնում Թավրիզ: Ապա Փարիզում մոտ չորս ամիս գաղտնի ապրելուց հետո մեկնում է Բուլղարիա և հաստատվում Սոֆիայում: Այստեղ 1922 թ. նա ամուսնանում է Էփիմե անունով հայուհու հետ (ծնված 1902 թ.): Այդ ամուսնությունից ծնվում է նրանց Վրեժ որդին:

1922 թ. լինելով Բուխարեստում՝ այնտեղ գտնվող Վարդան Գևորգյանին առաջարկում է իր տրամադրության տակ եղած նյութերի հիման վրա գրել «Լեռնահայաստանի հերոսամարտը» աշխատությունը, որը լույս տեսավ 1923 թ.: 1923 թ. Բուխարեստում Նժդեհը տեղի «Նոր Արշալույս» թերթում հանդես եկավ «Իմ խոսքը, թե ինչու՞ զենք բարձրացրի խորհրդային զորքերի դեմ» հոդվածաշարով¹: Այդ տարիներին Նժդեհը հանգամանակից անդադարում է Սյունիքի կռիվների պատմությանը: Հայտնի է, որ 1922 թվականից մինչև 1933 թվականի ամառը Գ. Նժդեհը բնակություն էր հաստատել Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում²: Այստեղից նա Սյունիքի կռիվների պատմության մասին 1923-1925 թթ. ընդարձակ հոդվածաշարով հանդես է եկել ԱՄՆ-ի Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: 1924 թ. լույս է տեսնում նրա «Էջեր իմ օրագրեն» գրքույկը: 1926 թ. Նժդեհը թղթակցում է Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» դաշնակցական թերթին, որտեղ տպագրվում է նրա «Բաց նամակներ հայ մտավորականությանը» շարքը, որը 1929 թ. լույս է տեսնում առանձին գրքույկով³: 1927 թ. լույս ընծայեց «Որդիների պայքարը հայրերի դեմ» գրքույկը, միաժամանակ որոշ հրապարակումներով հանդես եկավ Շահան Նաթալիի կողմից Փարիզում 1928-1929 թթ. խմբագրվող, ընդգծված հակաթուրքական ուղղվածությամբ «Ազատ մարտ» շաբաթաթերթում: 1932 թ. լույս տեսավ նրա հերթական գրքույկը՝ «Ցեղի ոգու շարժը» վերնագրով, որում (ինչպես նաև «Խռովք» ամսագրում նույն թվականին լույս տեսած «Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի գորույթ» հոդվածում) նախանշվեց հայկական ցեղային շարժումը⁴:

¹ «Նոր Արշալույս», Բուխարեստ, 1923թ., թիվ 10-11:

² Տե՛ս Ռաֆայել Համբարձումյան, Գարեգին Նժդեհ (համառոտ վարք, ասույթներ և կենսագրություն), Երևան, 2008, էջ 46:

³ Տե՛ս Մուշեղ Լալայան, Ցեղակրոն և Տարոնական շարժումները Սփյուռքում 20-րդ դարի 30-ական թվականներին, Երևան, 1997, էջ 87:

⁴ Գարեգին Նժդեհ, Ընտիր երկեր, Երևան, 2007, էջ 120, 156, 292, 299:

Իր ինքնակենսագրականում Գ. Նժդեհը գրել է. «1933 թ. Ամերիկա մեկնելուց առաջ մոտ երկու ամիս գտնվել եմ Փարիզում... մոտ 20 ամիս ապրել եմ Ամերիկայում, այնտեղ 1933-34 թթ. աշխատել եմ Կարմիր խաչի կազմակերպությունում»¹:

1933 թվականին Փարիզում կայացավ ՀՅԴ ընդհանուր ժողովը, որին նա մասնակցեց իբրև Բուլղարիայից ընտրված պատգամավոր: Նժդեհը ժողովի առջև բարձրացրեց երեք հիմնական պահանջ.

ա) ձգտել, որ գաղութահայությունը դառնա զինական գործոն Հայաստանի ինքնապաշտպանության գործում, բ) կազմակերպել հայ երիտասարդ սերունդը ապակուսակցական հողի վրա, գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում:

Բ կետի կատարման համար 1933 թ. ամռանը Նժդեհը մեկնեց ԱՄՆ: Այստեղ նրա գործունեության միանգամայն նոր և չլուսաբանված խնդիրները շատ էին:

Վենետիկի Սուրբ Ղազար կղզում պահվող Գարեգին Նժդեհի այսօր անհայտ ավելի քան 40 բանաստեղծությունների և 17-ի չափ բացառիկ արժեքավոր նամակների, որոնք ուղղված են ԱՄՆ-ի ցեղակրոն ուխտերի հայտնի գործիչ, 1930-ական թթ. ՀՅԴ ԱՄՆ Կենտրոնական կոմիտեի անդամ, Գ. Նժդեհի վստահելի ու սիրելի բարեկամներից մեկին՝ Հովհաննես Հովհաննիսյանին, ձեռագրերին կցված է Ս. Ղազարի միաբան, վարդապետ Սահակ ճեմճեմյանի գրությունը, որով վերջինս հայտնում է, որ «Հովհաննես Հովհաննիսյանը, երբ 1971թ. սեպտեմբերի 27-ին եկել էր Ս. Ղազար, իր հետ բերել էր Նժդեհի արժեքավոր վերոհիշյալ նամակները՝ իրեն ուղղված, որոնք իմ խնդրանքով հասցրեց ինձ, որպեսզի ես այն հրատարակեմ, որպեսզի իր կյանքի վերջին տարիներին տեսնի և ուրախանա»: Այդ նամակների ձեռագրերի լուսապատճենները հանձնվել են Ռաֆայել Համբարձումյանին, վերջինիս միջոցով՝ ՀՀ Ազգային արխիվի տնօրեն պարոն Ամատունի Վիրաբյանին, որոնք ինձ են տրամադրել վերոնշյալ նամակները, որտեղ չափազանց հետաքրքիր և նոր մանրամասներ կան Նժդեհի՝ ԱՄՆ-ում ծավալած գործունեության մասին²: Մենք կաշխատենք այդ նորահայտ նամակների ոգով ներկայացնել ԱՄՆ-ում Գ. Նժդեհի գործունեության չլուսաբանված կողմերը: Նամակները բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն Գ. Նժդեհի գործունեության լուսաբանման, այլև 1920-1930-ական թվականների հայոց պատմության բազմաթիվ խեղաթյուրված իրողությունները ճշտելու համար: Դրանցում Գ. Նժդեհը տալիս է նաև ցեղակրոնության և տարոնականության մեկանբանությունները, որոնք ամբողջացնում են դրանց էությունը բացահայտող իր սահմանումները:

Գ. Նժդեհի հետ, ընդհանուր ժողովի որոշումներով, ԱՄՆ անցավ կուսակցական հայտնի գործիչ Կոպեռնիկ Թանդրճյանը, որին հանձնարարված էր կազմակերպել ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար բեյի սպանությունը (վերջինս մասնակից էր

¹ Ռ. Համբարձումյան, Նժդեհ, Երևան, 2007, էջ 371:

² Տես Գարեգին Նժդեհ, Նորահայտ նամակներ, Երևան, 2011:

արևմտահայերի ջարդերին և արտասահմանում հակահայկական քարոզչության դեկլարանտներից էր): Նժդեհը պիտի աջակցեր Թանդրճյանին այդ գործում¹:

1934 թ. սկզբին Նյու-Յորքի Սբ. Խաչ եկեղեցում դաշունահարվեց ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը: Դուրյանի սպանության կազմակերպման պատասխանատվությունը տարբեր ուժեր փորձեցին վերագրել Նժդեհին՝ ցեղակրոն շարժումը չեզոքացնելու դավադիր մտադրությամբ: «Իմ այդ ազգահոգ քարոզչության համար հայության հատվածականացած, ապահայրենացած ու պարտվողական տարրերը դավադրեցին ինձ,– գրում է Նժդեհը: Նա թեև բացասաբար էր վերաբերվում Դուրյանի անձին, սակայն գտնում էր նաև, որ սպանությունը հնարավորություն տվեց ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար բեյին թաքնվել և փրկվել իրեն սպասվող հարվածից: Սպանության շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, և դա ազդանշան հանդիսացավ Մուխտար բեյի համար՝ ամերիկյան կառավարության մոտ բարձրացնել իր անվտանգության հարցը և թաքնվել²:

ԱՄՆ-ում Նժդեհը նախաձեռնում է ցեղակրոն շարժումը: Հենց 1933 թ. հունվարի 14-ին նա հիմնեց Ցեղակրոն ուխտեր, իսկ 1934 թ., հունվարի 1-3-ը վարեց այդ ուխտերի անդրանիկ համագումարը, որին ներկա էին 40 կազմակերպությունների («ուխտերի») ընտրյալ ներկայացուցիչներ:

Ժողովը հունվարի 14-ը հռչակեց ցեղակրոնների օր, օգոստոսի 10-ը՝ «Դրոշակի», Բարսեղ Կանաչյանի և Ժորժ (Գևորգ) Կառավարենցի «Յառաջ նահատակ» երգը՝ ցեղակրոնների ժամանակավոր քայլերգ, «Հայրենիք» շաբաթաթերթի անգլերեն տարբերակը («Հայրենիք ուիքլի», “Hairenik Weekly”) հայտարարվեց ցեղակրոնների պաշտոնական շաբաթաթերթ³:

«Ցեղակրոն ուխտերն առաջ,– գրում է «Հայրենիք» ամսագիրը,– Ամերիկայի կարգը մը քաղաքներուն մէջ ունէինք «Հայորդիներ», «Ապրիլիան սաներ» և զանազան անուններով պատանեկան ու երիտասարդական խումբեր: Հունիսի 1-ի համագումարի գլխավոր նպատակը եղավ ցաք ու ցրիվ բոլոր այդ երկեսե խմբերն իրար մոտ բերելը: Տեղեկագիրը կըսե նաև, որ մինչև այժմ կազմված են 44 ուխտեր՝ ավելի քան 1500 անդամներով⁴: «Գ. Նժդեհը մեկ տարվա մեջ իրար մոտ բերեց, հոգեկան կապով իրար շաղկապեց 60 ցեղակրոն կազմակերպություններ («ուխտեր») 2500 անդամներով⁵: Նա հասկանում էր, որ Ցեղակրոն շարժումը կարող է հաջողություն ունենալ միայն ամուր և համահայկական կառույցի դեպքում: Միայն հայ ամենաազդեցիկ կազմակերպությունը կարող էր այդպիսին լինել: Ընդ որում, ամերիկյան թերթերից քաղված մեջբերումները վկայակոչելով՝ Ավոն գրում է. «Նժդեհը հայամետ քարոզչություն է իրականացնում նաև Նիւ Եորքի, Փրովիտենսի, Պոսթընի, Պըֆլոյի, Տիթթոյիտի,

¹ Տե՛ս Մ. Լալայան, նշված աշխ., էջ 81:

² Տե՛ս նույնը, էջ 127:

³ Կարո Գեորգեան, Ամէնուն տաեգիրքը, Պեյրուք, 1963 թ., 2-րդ տարի, բացառիկ, էջ 417-418:

⁴ «Հայրենիք» ամսագիր, 1934թ., 9 հուլիս, էջ 155:

⁵ Տե՛ս Ավո, Նժդեհ, Բեյրուք, 1968թ., էջ 508, 514:

ՍԷՆՔ Լուիզի, Չամիլթընի, Կոլտի, Ֆրեզնոյի, Լոս Անճելըսի, Սան Ֆրանցիսկոյի, Թորոնթոյի, ՍԷՆՔ Քաթերինսի և այլ վայրերու ամերիկեան մամուլի էջերէն»¹:

Խոսելով ԱՄՆ-ուն ցեղակրոն շարժումը սկզբնավորելու և ծավալելու անհրաժեշտութեան մասին՝ Գ. Նժդեհը գրում է, որ այդ կազմակերպութիւնը նա ստեղծել է.

ա) Պարտվողականութեամբ տառապող գաղութահայութեան, հատկապէս երիտասարդ հատվածին հոգեփոխելու, նրան ազգային գիտակցութիւն, ուժ ու վստահութիւն ներարկելու, «որով անհայրենիք հայութիւնը հոգևոր զրահ կհազմի օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութիւններին հաջողութեամբ դիմագրավելու համար»:

բ) Քենալական իշխանութեան հաստատման առաջին իսկ օրերից... Արևմտյան Չայաստանում կատարված ցեղասպանութիւնը հասկանալու..., թուրքերի հակահայկական քարոզչական արշավի դեմն առնելու համար:

գ) Չայկական սպանդին հետևող բարոյական եղեռնի վարկաբեկմանը դիմակայելու համար՝ իբրև ինքնապաշտպանական քայլ:

դ) Չայկական հին կուսակցութիւնների կողմից Չայոց դատից հրաժարվելու և Թուրքիային մերձենալու մտայնութեանը «ոչ» ասելու և հայութեանը «Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին տեր դարձնելու» նպատակով:

Շարունակելով իր միտքը՝ Գ. Չովհաննիսյանին հասցեագրած նամակներից մեկում նա բացահայտում է ցեղակրոնութեան էությունը և նպատակները:

«Չայը Չայաստանից դուրս ենթակա է վատասերումի,— գրում է Նժդեհը,— ապա ավելացնում, որ այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր է միայն ցեղային արժեքների, առաքինութիւնների ու սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով,— մի բան, որ հիմնավորեցի և անվանեցի Ցեղակրոնութիւն: Դրա նպատակն է անհայրենիք հայութեանը հոգևոր ու քաղաքական անտուն՝ անտերութիւնից փրկելով, դարձնել հայրենատեր: Դա հայրենասիրական շարժում է, որի մեջ վերանորոգվելով միայն պիտի միանան հայութեան բոլոր հատվածները»²:

Նամակներից մեկում Նժդեհը նշում է Ցեղակրոնութեան ծագումն ու նպատակները հենց ստեղծման փուլում. «...Տարիներով իմ միտքը չարչրկել է մի հատիկ հարց՝ Չայաստանի ինքնապաշտպանութեան գործի իրականացումը: Ցեղակրոնութիւնը չծնվեց գաղութներում, դա բերված է երկրից, մեր հայրենիքից: Դա կյանքի կոչվեց 1919-1921 թվականներից, երբ վտանգներից ամենից ահավորն էր կախված Չայոց Լեռնաշխարհի գլխին: Ոչ ֆաշիզմ, ոչ էլ հիտլերականութիւնը չկար աշխարհում այդ ժամանակ: Ցեղի՝ հավիտենականութեամբ ապրելու և նրա համար մեռնելու ուխտն էր, Դավիթբեկյան Ուխտը, որ թուրքի և թաթարի վտանգից ազատեց Լեռնահայութեանը զենքի ուժով և մայր երկրին կցեց Ադրբեջանին թողած Սյունյաց աշխարհը... Ցեղակրոնութիւնը հայ կյանքի բարձրագոյն նոր ակիքն է՝ ուղղված գլխավոր չարիքների դեմ»³:

¹ ՏԵՍ Ավո, նույն աշխ., էջ 240:

² Գ. Նժդեհ, Նորահայտ նամակներ, էջ 21-22:

³ ՏԵՍ նույն տեղում:

Մեկ այլ առիթով նամակներից մեկում նա շարունակում է. «Քանի որ գաղութահայության ամենամեծ զանգվածն ապրում է ԱՄՆ-ում, որտեղ մեր սերնդին ամենամեծ վտանգն է սպառնում (ի դեմս ամերիկյան միջավայրի ամենակուլ, ձուլող հատկության), ես ցեղարկրոն շարժումը սկզբնավորեցի Ամերիկայում»¹: Ցեղակրոն շարժումը ոչ մի ընդհանուր բան չունի և չէր կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի այն, նախ և առաջ, բարեփոխիչ շարժուն վերածնունդ է, որ հնարավոր է միայն սեփական, այլ ոչ փոխառված արժեքներով»²:

Այսպիսով, անվիճելի իրողություն է, որ Ցեղակրոնությունն իբրև զուտ հայկական յուրատիպ գաղափարաբանություն, հիմնավորապես տարբերվում է 1919 թ. Իտալիայում ու Գերմանիայում սկզբնավորված, 1922 թ. Իտալիայում (Մուսոլինի), 1933 թ. Գերմանիայում (Յուդենի) իշխանության եկած և աշխարհի բազմաթիվ երկրներում տարածում գտած ցեղամոլ ֆաշիստականությունից:

Ցեղակրոնությունը ֆաշիստականությունից հատկապես տարբերվում ու առանձնանում է քրիստոնեական դրոշմով: Ֆաշիստների համար քրիստոնեությունը անընդունելի էր, մինչդեռ 20-րդ դարի հայոց մեծագույն պատգամախոսի գաղափարախոսության մեկնակետը հայոց քրիստոնեությունն էր:

«Մութի մեջ գործի են դրված բոլոր ժամգոտ զենքերը. կաշառում, խոտում, սպառնալիք և այլն: Այս ճամփով են ուզում շեֆություն ձեռք բերել նրանք,— գրում է Նժդեհը Յ. Յովհաննիսյանին,— որոնք հայոց նորագույն պատմության ամենավտանգալից և մեղ օրերին՝ տմարդորեն լքած են ժողովուրդը»:

Գ.Նժդեհը գնահատում է իր կատարած աշխատանքի նպատակադրումը: Նա գտնում է, որ պետք է, առաջին՝ ատամներով պաշտպանել Ցեղակրոն անունը, երկրորդ՝ ցավ է հայտնում, որ չօգտվեց Ցեղակրոն շարժումից և չաշխատեց այն դարձնելու համագաղութային:

1933 թ. վերջերին Բոստոնի «Յայրենիք» օրաթերթում Նժդեհը հանդես եկավ ամերիկահայ նորահաս սերնդին ուղղված «Ցեղային արթնություն» խորագիրը կրող հոդվածաշարով: Ժամանելով ԱՄՆ՝ Նժդեհը՝ օժտված մարգարեական շնչով ու մոգական հմայքով, Ամերիկայի մեկ ծայրից մյուսը «էլեկտրականացուց մթնոլորտը իր կուռ բանախոսություններով, անկեղծ ու անկախ արտահայտություններով և անվիճելի փաստերով»,— ասված է «Յայրենիք» օրաթերթի 1963 թ. սեպտեմբերի 13-ի համարում: Շնորհիվ Նժդեհի կազմակերպչական ու քարոզչական բացառիկ տաղանդի Ցեղակրոն շարժումը միանգամից լայն թափ ստացավ: Եվ, ինչպես խոստովանում է Ռուբեն Դարբինյանը, այդ նույն տեղում «առանց Նժդեհի ներշնչած ոգևորության, առանց նրա մղիչ ուժի, առանց նրա առաքինող անձի հմայիչ ազդեցության, դժվար թե ամերիկահայ մեր նոր «սերունդը կարողանար կազմակերպվել այդքան կարճ ժամանակում: Այս շարժման շնորհիվ է, որ նրանով խանդավառված ամերիկահայ

¹ «Ցեղի հավիտենական ձեռքը», Յատընտիր, 2001 թ., էջ 334, Գ. Նժդեհ, Երկեր, հատ. 1, Երևան, 2002, էջ 393:

² «Յայրենիք», ամսագիր, Բոստոն, 1963 թ., թ. 11, էջ 24:

բազմահազար երիտասարդուհիներն ու երիտասարդները սկսեցին ոչ միայն ամոթ չզգալ իրենց հայության համար, այլև հպարտություն ապրել»:

Նժդեհը ավարտին չհասցրեց իր գերագույն նպատակը՝ գաղութահայությանը ցեղակրոնությամբ, տարոնականությամբ ազգայնացնելով՝ ազատագրելով օտարի հսկողությունից: Իր նամակներից մեկում նա այսպես է փաստում, վկայում նշված իրողությունը. «Արտաքին թշնամին զինակիցներ գտավ ներքին ուժերի մեջ և դավեց Ցեղակրոնության դեմ.....»¹:

Գարեգին Նժդեհն իր նամակներում պարզաբանում է այն հարցը, թե ինչու գնաց Ամերիկա, ինչ արեց և ինչպես արեց: 1936 թ. նոյեմբերի 15-ի նամակում գրում է. «Ես չեկա Ամերիկա ժողովրդականություն փնտրելու, այլ աշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան ոչինչ չավելացրեց այն բանին, որ ես ստացած եմ Հայաստանից, Լեռնահայաստանից: Ամերիկան կռվադաշտ չէ, որ նոր բան տար ինձ: Ամերիկայում ինձ հաջողվեց, հակառակ շատերի չկամության, ոտքի հանել հայոց ցեղը, ցեղայնությունը նորահաս սերունդի մեջ: Իսկ ինձ հաջողվեց, որովհետև ես Ամերիկա եկա որոշ առաքելությամբ, որովհետև ես ունեի իմ որոշ ճամփան, ես գիտեի իմ գործը, իմ անելիքը: Ես չեկա հրահանգվելու և հրահանգներ կատարելու, ես եկա հրահանգելու, ղեկավարելու»²:

1930-ական թթ. ԱՄՆ-ում գտնվելու տարիներին Գարեգին Նժդեհը խորհրդածում է. «Օհաննես, մի ժողովուրդ, որը չգիտե իր ներքին սրիկաները պատժել, չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին»³:

Նամակներից մեկում շարունակելով իր միտքը՝ գրում է. «Ամեն անգամ հաստատում է պատմությունը, երբ ժողովուրդը բարոյական քաջություն չի ունենում պատժելու իր դժբախտության հեղինակներին, այդ միևնույն հեղինակների միջոցով պատմությունը պատժում է ժողովրդին: Ահա՛, սիրելիս, թե ինչն է տագնապեցնում ինձ»⁴:

ԱՄՆ-ում գտնվելու ժամանակ Նժդեհը արդեն զգում էր պատերազմի անխուսափելիությունը և մտածում էր իր հիմնադրած ցեղակրոն ուխտերից ստեղծել Հայաստանի անկախությունը վերականգնելու և հայության ինքնապաշտպանությունը վարելու համար լեգիոններ (Այդ գաղափարը 1942 թ. վերջերից մինչև 1943 թ. նոյեմբերը 10 տարվա ուշացումով իրագործվեց): «Այսօր,- գրում էր նա իր 1937 թ. հունվարի 7-ի նամակում,- Ցեղակրոնությունը հող գտած կլիներ մեր բոլոր գաղութներում, ամեն գաղութ ստեղծած կլիներ ուխտվածների իր լեգիոնը, այսօր մեր թիվը հասած կլիներ տասնյակ հազարի, եթե մեզ հաջողվեր ժամանակին զինաթափել ներքին չարությունը՝ տգետ ու նախանձեղի»: Մեկ այլ անթվակիր նամակում հավելում է. «Այժմ մենք տասնյակ հազարի հասնող Ցեղակրոններ պետք է ունենայինք Սփյուռքի մեջ,

¹ Գարեգին Նժդեհ, Նորահայտ նամակներ, էջ 26, 27:

² Նույն տեղում, էջ 31,32:

³ Նույն տեղում, էջ 34,35:

⁴ Նույն տեղում, էջ 38, 39:

գաղութից գաղութ... Թուրքն իր կնոջը տղամարդ զինվոր է դարձնում այսօր, մենք, իսկ մե՞նք...ոչ »¹:

1936 թ. հունվարի 25-ի նամակում Գ. Նժդեհը գրում է. «Կյանքիս մեջ անձս, անձնական պաշտպանելու վատություն չեմ ունեցել: Կազմակերպված դավը միայն զգվանքս է շարժել և խորապես ցավեցրել հոգիս:

Բանտերում՝ նահատակություն օտարների ձեռքով, ազատության մեջ՝ մարտիրոսացում յուրայինների ձեռքով: Ահա՛ մեր ժողովրդի բոլոր ժամանակների սրբազնագույն դեմքերից մեկի կյանքը, երբ թշնամու դեմ կռվադաշտում չէր»:

ԱՄՆ-ում գտնվելու ժամանակ նա գրել է. «Ես տեսա հոգով ազատը ստրկության մեջ և սիրեցի մարդը: Ես տեսա ստրուկը ազատության մեջ և գարշեցի մարդուց»:

Էդիկ Մինասյան, Գարեգին Նժդեհի սփյուռքյան գործունեությունից – Հոդվածում նորագույն փաստաթղթերի ուսումնասիրությամբ հեղինակը բացահայտում է մեծ զորավար ու քաղաքական գործիչ Նժդեհի սփյուռքահայ գործունեությունը: Մանսավորապես քննարկվում է ԱՄՆ-ում Ցեղակրոն շարժման սկզբնավորման, կազմակերպման ու տարածման ուղղությամբ Նժդեհի կատարած աշխատանքը և այդ շարժման կարևորությունը աշխարհով մեկ սփռված հայ բեկորների ազգային ինքնությունը, կարևորությունը ապահովելու համար: Նա ապացուցում է, որ ցեղակրոնությունը զուտ հայկական գաղափարաբանություն է, կապ չունի ֆաշիզմի հետ և առանձնանում է քրիստոնեական դրոշմով:

Эдик Минасян, Из деятельности Гарегина Нждэ в диаспоре –
-
-
(,) ,
“ ” ()-

Edik Minasyan, On Garegin Nzhdeh's activity in diaspora – In the article, on base of newly found documents the author reveals the activity of the great commander and political figure Garegin Nzhdeh in diaspora. In particular he discusses Nzhdeh's work for organising and propagating "Tseghakron" (religion of nation, ethno religion) movement in USA and the importance of that movement for maintenance of national identity of the Armenians spread all over the world. He proves that "Tseghakron" is a pure Armenian ideology, has no relation to fascism and is noted for its truly Christian nature.

Էդիկ Մինասյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան



¹ Տես նույն տեղում: